Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հայտարարում է բաց մրցույթ՝ Հանձնաժողովի անդամի օգնականի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. **Հանձնաժողովի անդամի օգնականի հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**

   - կազմակերպչական և ադմինիստրատիվ աշխատանքի իրականացում, հեռախոսազանգերի սպասարկում,
   - հասարակական կապերի ապահովում,
   - հանդիպումների պլանավորում և կազմակերպում,
   - Հանձնաժողովի անդամի կողմից իրականացվող գործառույթներից և խնդիրներից բխող ընթացիկ և հեռանկարային աշխատանքային ծրագրերի, գրությունների, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախագծերի կազմում,
   - ոլորտային ուսումնասիրությունների և հետազոտությունների իրականացում,
   - Հանձնաժողովի նախագահի/անդամի համակարգման ոլորտներում առկա իրավիճակի և արդի հիմնահարցերի վերաբերյալ պարբերաբար ամփոփ տեղեկատվության տրամադրում,
   - այլ հանձնարարականների կատարում:

2. **Օգնականին ներկայացվող պահանջները՝**

   - Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն
   - Բարձրագույն կրթություն /ցանկալի է իրավունք կամ տնտեսագիտություն մասնագիտությամբ /,
   - համապատասխան բնագավառի կամ մասնագիտական աշխատանքային փորձ,

- տիրապետում է հայերեն լեզվին,
- տիրապետում է ռուսերեն և անգլերեն լեզուներին (ազատ),
- տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կառավարման ունակություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում, արագ սովորելու, սեղմ ժամկետներում աշխատելու, խնդիրները լուծելու և անսովոր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն:

3. **Դիմումների ներկայացման վերջնաժամկետն է՝** 21 դեկտեմբերի 2022թ.

4. **Աշխատանքի վայրը՝** ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15

5. **Դիմողի կողմից ներկայացվող փատաթղթերի անհրաժեշտ ցանկ՝**
   - տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), վկայականի(ների) պատճենները, աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճենները,
   - արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր՝ զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը կամ համապատասխան տեղեկանք,
   - ինքնակենսագրական,

- անձնագրի և հանրային ծառայության համարանիշի (սոցիալական քարտի) կամ նույնականացման քարտի պատճենները:

6. **Ընտրություն կատարելու եղանակն է՝** դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն և հարցազրույց:

Դիմողը փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով (Օրենսդրության պահանջներին համապատասխան), **էլ. փոստ՝** hr@cpcarmenia.am**:**

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15, 1-ին հարկ, հեռախոսոսահամար՝ 012 77 77 24: